

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	3
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	7
4. ՓՈԽԱՐԺԵՔ	9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	10
5.1. Բյուջեի եկամուտները	10
5.2. Բյուջեի ծախսերը	12
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	13
5.4. Պետական պարտք	13
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	14
6.1. Գնաճ	14
6.2. Ավանդներ	15
6.3. Վարկեր	16
7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	18
8. ԱՄՓՈՓՈՒՄ	19

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

«Ն տնտեսությունը, 2020թ. ճգնաժամից դեռևս չվերականգնվելով, կանգնած է նոր ճգնաժամի շեմին: 2022թ. հունվարին տնտեսական ցուցանիշները բավական բարձր էին, սակայն փետրվարից նկատվում էր աճի տեմպի դանդաղում: Իսկ փետրվարի վերջից սկսված ռուս-ուկրաինական պատերազմի բացասական ազդեցությունների ներքո կտրուկ դանդաղել է «Ն տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ): Այսպես, 2022թ. մարտին ՏԱՑ-ը կազմել է 6.7%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով շուրջ 1.5 տոկոսային կետով: Արդյունքում հունվար-մարտ ամիսներին ՏԱՑ-ը կազմել է 9.6%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 1.7 տոկոսային կետով:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային¹, %




2022թ. հունվար-մարտ ամիսների ՏԱՑ-ի դանդաղումը հիմնականում պայմանավորված է արդյունաբերության և առևտրի ավելի փոքր նպաստումներով, որոնք կազմել են համապատասխանաբար 0.8 և 2.8 տոկոսային կետ՝ նախորդ ամսվա 2.5 և 3.1 տոկոսային կետի փոխարեն: Ծառայությունների նպաստումը, ընդհակառակը, մեծացել է՝ կազմելով 4.6 տոկոսային կետ՝ նախորդ ամսվա 4.1-ի փոխարեն:

Գյուղատնտեսության ոլորտը կրկին անկում է գրանցել՝ շուրջ 5.4%-ով՝ ընդհանուր ՏԱՑ-ին ունենալով շուրջ 0.6 տոկոսային կետով բացասական նպաստում:


¹ ՏԱՑ-ի հունվար և փետրվար ամիսների ցուցանիշները վերանայվել են «Ն ՎԿ-ի կողմից, ինչի արդյունքում հունվարի ՏԱՑ-ը նախորդ ամիս հրապարակված 15.4%-ից դարձել է 14.8%, իսկ փետրվարի ՏԱՑ-ը՝ 9.0%-ից դարձել է 8.2%: Հունվար-փետրվար ամիսների ՏԱՑ-ը ևս փոխվել է՝ 12.0%-ից դառնալով 11.3%:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2022թ. հունվար-մարտ, տոկոսային կես



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը², %



Արդյունաբերության ոլորտն էականորեն տուժել է արտաքին շուկի արդյունքում: Արդյունաբերության ոլորտի իրական թողարկումը 2022թ. մարտին նվազել է նախորդ տարվա նույն ամսվա համեմատ շուրջ 6.9%-ով, ինչի արդյունքում արդյունաբերության հունվար-մարտ ամիսներին աճը կտրուկ դանդաղել է՝ կազմելով 3.1%՝ նախորդ ամսվա 9.0%-ի համեմատ: Արդյունաբերության կտրուկ դանդաղումը կարող է պայմանավորված լինել ինչպես հանքարդյունաբերության,

² Արդյունաբերության փետրվար ամսվա ցուցանիշը վերանայվել է ՀՀ ՎԿ-ի կողմից, ինչի արդյունքում այն դարձել է 2.4%՝ նախորդ ամիս հրապարակված 3.7%-ի փոխարեն: Հունվար-փետրվար ամիսների SUՑ-ը դարձել է 9.0%՝ 9.7%-ի փոխարեն:


այնպես էլ մշակող արդյունաբերության որոշ ապրանքատեսակների (հիմնականում ալկոհոլային խմիչքների) արտահանման խափանումներով՝ կապված ռուս-ուկրաինական պատերազմով: Այս մասին առավել մանրամասն տեղեկատվություն հասանելի կլինի 2022թ. հունվար-մարտ ամիսների սոցիալ-տնտեսական վիճակի մասին վիճակագրական տեղեկագրի հրապարակումից հետո:

2022թ. հունվար-փետրվար ամիսների տվյալներով³ արդյունաբերության աճը պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության շուրջ 16.7% աճով, որի նպաստումը ընդհանուր արդյունաբերության աճին կազմել է 9.0 տոկոսային կետ: Հանքարդյունաբերության ոլորտում արձանագրվել է 3.4% անկում, ինչն ընդհանուր արդյունաբերության աճին հակազդել է 0.9 տոկոսային կետով:

Արդյունաբերության աճին նպաստել են նաև «էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» և «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաճյուղերի աճերը՝ համապատասխանաբար 1.5 և 0.1 տոկոսային կետով:

1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %




Շինարարության ծավալների աճի տեմպն արագացել է: Շինարարության աճն ընթացիկ տարվա մարտին կազմել է 8.2%՝ փետրվարի համեմատ արագանալով 1.9 տոկոսային կետով: Հունվար-մարտ ամիսների շինարարության աճի տեմպը նույնպես արագացել է՝ կազմելով 6.2%: Հատկանշական է, որ ապրիլին

³ 2022թ. հունվար-մարտ ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

առկա է նախորդ տարվա զգալիորեն մեծ բազա, որի համեմատ հնարավոր է արձանագրվի շինարարության աճի տեմպի դանդաղում:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




Ծառայությունների աճի տեմպն արագացել է, ինչը կարող է պայմանավորված լինել ՌԴ-ից ժամանողների քանակի աճով: 2022թ. տարեսկզբից ծառայությունների աճի տեմպը բավական բարձր է եղել՝ պայմանավորված նախորդ տարվա բացասական սոցիալ-հոգեբանական միջավայրում ծառայությունների էական անկմամբ: Փետրվարից, տնտեսական աճի տեմպի դանդաղմանը զուգահեռ, նկատվել է ծառայությունների աճի որոշակի դանդաղում, որը սակայն չի շարունակվել մարտին: Դրա պատճառը ՌԴ քաղաքացիների ներհոսքն է Հայաստան, ինչը հանդիսանում է իրավիճակից բխող՝ ՀՀ տնտեսության համար որոշակի դրական ազդեցություն: Այս պայմաններում մարտ ամսին ծառայությունների աճը կազմել է շուրջ 25.9%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 6.9 տոկոսային կետով: Հունվար-մարտ ամիսների ծառայությունների աճի տեմպը նույնպես արագացել է՝ կազմելով 22.2%:

2022թ. հունվար-փետրվար ամիսների տվյալներով⁴ ծառայությունների աճը առավելապես պայմանավորված է «տրանսպորտ», «տեղեկատվություն և կապ» և «կացության և հանրային սննդի կազմակերպում» ենթաճյուղերի աճերով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 6.1, 4.9 և 2.9 տոկոսային կետ:

⁴ 2022թ. հունվար-մարտ ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

1.4. Առևտուր


Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի ոլորտի աճի տեմպը նույնպես արագացել է, ինչը ևս կարող է պայմանավորված լինել ՌԴ քաղաքացիների ներհոսքի աճով: 2022թ. մարտին առևտրի աճի տեմպը փետրվարի դանդաղումից հետո սկսել է արագանալ՝ կազմելով 6.6%: Հունվար-մարտ ամիսների առևտրի աճի տեմպը, սակայն, շարունակել է դանդաղել՝ կազմելով 7.6%: Առևտրի ոլորտը նույնպես իր վրա կրել է ՌԴ-ից ՀՀ ժամանողների դրական ազդեցությունը: Սակայն, ինչպես և ծառայությունների պարագայում, այս աճերը կարող են ժամանակավոր լինել, քանի որ իրավիճակի որոշակի բարելավման դեպքում ՌԴ-ից ժամանած քաղաքացիները կարող են հետ վերադառնալ:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ⁵, %




Արտահանման աճը կտրուկ դանդաղել է՝ կրելով արտաքին շուկերի ազդեցությունները: 2022թ. մարտին արտահանման աճը կազմել է 4.0%՝ փետրվարի համեմատ դանդաղելով շուրջ 7.5 անգամ: Դանդաղման պատճառը, ինչպես և արդյունաբերության անկման պարագայում, հանդիսանում են ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով արտահանման լոգիստիկ խնդիրները, որի պատճառով արտահանողները պարզապես չեն կարողացել արտադրանքը հասցնել արտասահմանյան շուկաներ:

2022թ. հունվար-փետրվար ամիսների տվյալներով⁶, արտահանման աճը հիմնականում պայմանավորված է եղել հանքահումքային արտադրանքի արտահանման 28.3% աճով, որի նպաստումը կազմել է 10.2 տոկոսային կետ: Արտահանման աճին էական նպաստում են ունեցել նաև «պատրաստի սննդի արտադրանք», «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի արտահանման աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 7.5, 6.4 և 5.1 տոկոսային կետ:

⁵ ՀՀ վիճակագրական կոմիտեն վերանայել է արտահանման նախորդ ամիսների ցուցանիշները՝ 2022թ. հունվար ամսվա ցուցանիշը նախկինում հրապարակված 53.3%-ը դարձնելով 53.4%, իսկ հունվար-փետրվար ամիսների ցուցանիշը՝ 40.1%-ից դարձնելով 40.8%:

⁶ 2022թ. հունվար-մարտ ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ⁷, %



Ներմուծման ծավալների աճի տեմպը կտրուկ դանդաղել է, սակայն էականորեն բարձր է եղել արտահանման աճի տեմպից՝ վատթարացնելով առևտրային հաշվեկշիռը: Ներմուծման աճը 2022թ. մարտին կազմել է 22.5%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 32.6 տոկոսային կետով: Հունվար-մարտ ամիսների ցուցանիշը կազմել է 45.6%՝ դանդաղելով 14.8%-ով: Ներմուծման աճի տեմպը զգալիորեն գերազանցել է արտահանման աճին՝ վատթարացնելով առևտրային հաշվեկշիռը: Նման իրավիճակի շարունակությունը կարող է լրացուցիչ ռիսկեր ստեղծել արտաքին կայունության տեսանկյունից:

Ներմուծման աճին նպաստել են գրեթե բոլոր ապրանքախմբերի ներմուծման ծավալների աճերը (հունվար-փետրվար ամիսների տվյալներով⁸), որոնցից առավել նշանակալի է եղել «քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք», «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և «հանքահումքային արտադրանք» (հիմնականում բնական գազ) ապրանքախմբերի ներմուծումը, որոնք ունեցել են համապատասխանաբար 8.4, 7.4, 7.1 և 6.9 տոկոսային կետ:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ


2022թ. հունվար-փետրվարին անվանական աշխատավարձի աճի տեմպը բարձր է եղել⁹, սակայն իրական աշխատավարձը մնացել է նույնը: Միջին

⁷ ՀՀ վիճակագրական կոմիտեն վերանայել է ներմուծման փետրվար ամսվա աճի ցուցանիշը՝ նախկինում հրապարակված 54.7%-ը դարձնելով 55.1%, ինչի արդյունքում հունվար-փետրվար ամիսների աճը 60.2%-ից դարձել է 60.4%:
⁸ 2022թ. հունվար-մարտ ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:
⁹ Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է Պետական եկամուտների կոմիտեից (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը)՝ ստացվող եկամտային հարկի և սոցիալական վճարի

ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում հունվար-փետրվար ամիսներին նախորդ տարվա համեմատ աճել է 7.0%-ով՝ կազմելով 205,418.0 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է 4.0%-ով և կազմել 172,201.0 դրամ, իսկ մասնավոր հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 7.6%-ով՝ կազմելով 220,658.0 դրամ:

Միևնույն ժամանակ, 2022թ. հունվար-փետրվարին սպառողական գների միջին մակարդակն աճել է 7.0%-ով, ինչն ամբողջությամբ չեզոքացրել է անվանական աշխատավարձի աճը: Արդյունքում իրական աշխատավարձը մնացել է անփոփոխ՝ նույն մակարդակում թողնելով վարձու աշխատողների կենսամակարդակը:

Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2021-2022թթ. հունվար-փետրվարին, %



հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, մարտի տվյալները դեռևս չեն հրապարակվել:

4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (% , աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում), և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)




2022թ. հունվար-մարտ ամիսներին ՀՀ դրամը զգալիորեն արժևորված է եղել նախորդ տարվա նույն ամիսների համեմատ: Այսպես, ՀՀ դրամի միջին փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ 2022թ. հունվար-մարտին արժևորվել է շուրջ 7.8%-ով, իսկ եվրոյի նկատմամբ ՀՀ դրամի արժևորումը կազմել է 15.6%: Ռ-Դ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամը տարեսկզբից եղել է արժևորված, սակայն մարտին արժևորման տեմպն ավելի է արագացել՝ հասնելով 22.1%-ի: Փոխարժեքի նման

դինամիկան էականորեն վատթարացրել է ՀՀ արտաքին առևտրի գնային մրցունակությունը:

Մարտի սկզբին, կապված ռուս-ուկրաինական հակամարտության ազդեցություններով, նկատվել է ՀՀ դրամի կտրուկ արժեզրկում, որը, սակայն, արագ չեզոքացել է ԿԲ արձագանքից (տոկոսադրույքի կտրուկ բարձրացումից) հետո: Ավելին, մարտի վերջից նկատվում է ՀՀ դրամի շարունակական արժևորում, որի պայմաններում դրամի փոխարժեքը ապրիլի 22-ի դրությամբ հասել է 467 դրամի՝ արձանագրելով 2015-ից սկսած ամենացածր մակարդակը:

Գծապատկեր 11. ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի անվանական փոխարժեքի օրական միտումները և ՀՀ ԿԲ շուկայական գործառնությունների տոկոսադրույքը 2022թ. փետրվար-ապրիլ ամիսներին



5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ¹⁰


5.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի ընդհանուր եկամուտների աճի տեմպը դանդաղել է, իսկ հարկային եկամուտներինը՝ մնացել նույնը: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2022թ. հունվար-մարտ ամիսներին աճել են շուրջ 21.8%-ով՝ նախորդ ամսվա 22.7%-ի փոխարեն: Հարկային եկամուտների աճը կազմել է 20.3%՝ նախորդ ամսվա համեմատ մնալով նույնը: Պետական բյուջեի ոչ հարկային եկամուտները

¹⁰ Պետական բյուջեի ցուցանիշների աճերի հաշվարկն իրականացվել է դրանց «հազար դրամներով» արտահայտված ցուցանիշների կիրառմամբ: Գծապատկերներում ներկայացված «մլրդ դրամ» արտահայտությամբ ցուցանիշների կիրառման դեպքում աճի ցուցանիշները կարող են փոքր-ինչ տարբեր լինել:

2022թ. հունվար-մարտ ամիսներին աճել են շուրջ 56.0%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհները՝ շուրջ 5.6%-ով:

Գծապատկեր 12. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է ավելացված արժեքի հարկի (աճը՝ 21.8%), պետական տուրքի (աճը՝ շուրջ 3.3 անգամ) և շահութահարկի (աճը՝ 55.7%) աճերով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 7.6, 4.9 և 4.1 տոկոսային կետ:

Պետք է նշել, սակայն, որ 2022թ. մարտին ՀՀ պետական բյուջե չեն ստացվել ԵԱՏՄ մաքսատուրքերը, ինչը պայմանավորված է տեխնիկական խնդիրներով: Այդ իսկ պատճառով, մաքսատուրքերը շուրջ 1.9 տոկոսային կետով հակազդել են հարկային եկամուտների աճին: Հետևաբար, դրանց բնականոն ստացման պարագայում հարկերի աճը կլիներ 1.9 տոկոսային կետով ավելի բարձր:


Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2021թ. հունվար-մարտ		2022թ. հունվար-մարտ	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	-4.6	-4.6	20.3	20.3
ԱԱՀ	-2.2	-0.8	21.8	7.6
Շահութահարկ	-35.9	-3.9	55.7	4.1
Եկամտային հարկ	-0.5	-0.2	3.6	1.2
Ակցիզային հարկ	-32.0	-2.5	29.1	1.6

Շրջանառության հարկ	-13.9	-0.4	28.5	0.7
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	38.8	0.9	-5.4	-0.2
Մաքսատուրք	16.4	0.8	-31.8	-1.9
Սոցիալական վճար	72.4	1.2	43.7	1.3
Այլ հարկային եկամուտներ	52.7	0.9	35.6	1.0
Պետական տուրք	-26.2	-0.7	226.0	4.9

5.2. Բյուջեի ծախսերը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ




Պետական բյուջեի ծախսերը նվազել են նախորդ տարվա համեմատ՝ հիմնականում կապիտալ ծախսերի նվազման հաշվին: Այսպես, 2022թ. հունվար-մարտին ՀՀ պետական բյուջեի ծախսերը նվազել են շուրջ 2.0%-ով՝ կազմելով 396.8 մլրդ դրամ: Ծախսերի նվազումը բացատրվում է կապիտալ ծախսերի շուրջ 29.4% նվազմամբ, ինչն էլ իր հերթին պայմանավորված է մի կողմից՝ էական թերակատարմամբ, մյուս կողմից՝ այն հանգամանքով, որ 2021թ. մարտին պաշտպանության ոլորտում խոշոր ծավալով կապիտալ ծախսեր են իրականացվել, և արձանագրվել է բարձր բազա, որի համեմատ ընթացիկ տարվա ծախսերը նվազող են: Հարկ է նշել, որ 2022թ. առաջին եռամսյակի համար պետական բյուջեի պլանով նախատեսված է եղել շուրջ 59.8 մլրդ դրամի կապիտալ ծախսերի իրականացում, սակայն փաստացի կատարվել են 34.6 մլրդ դրամի ծախսերը կամ պլանի 57.9%-ը: Դա նշանակում է, որ թերակատարումները շարունակվում են նաև 2022 թվականին:

Ընթացիկ ծախսերի աճը էականորեն դանդաղել է՝ կազմելով 1.8%՝ նախորդ ամսվա 9.9%-ի դիմաց: Այս մասով նույնպես առկա է թերակատարում. նախատեսված 421.2 մլրդ դրամի փոխարեն իրականացվել է ընդամենը 362.2 մլրդ դրամը կամ 86.0%-ը:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 14. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-)), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ




Պետական բյուջեն շարունակել է լինել հավելուրդային՝ չնայած նախատեսված էր պակասուրդային բյուջե: 2022թ. հունվար-մարտ ամիսներին պետական բյուջեից կատարված ծախսերի ծավալը եղել է ավելի փոքր, քան բյուջեի եկամուտները, ինչի արդյունքում ձևավորվել է բյուջեի հավելուրդ՝ 28.7 մլրդ դրամի չափով: Մինչդեռ, պետական բյուջեով նախատեսված էր շուրջ 66.8 մլրդ դրամի պակասուրդի ձևավորում: Պակասուրդի թիրախից շեղումը հանգեցնում է նաև հարկաբյուջետային քաղաքականության շեղմանը իր ուղղությունից, ինչի արդյունքում կառավարությունը չի կարողանա ապահովել տնտեսության վրա պլանավորված ազդեցության չափը:

5.4. Պետական պարտք

2022թ. մարտի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 9,356.6 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա մարտի նկատմամբ աճելով 8.1%-ով: Կառավարության պարտքը նույն ժամանակահատվածում նույնպես զգալիորեն աճել է՝ կազմելով 8,883.0 մլն ԱՄՆ դոլար և 2021թ. նույն ամսվա համեմատ ավելանալով 8.9%-ով: Պարտքի աճը հիմնականում պայմանավորված է եղել ներքին պարտքի աճով, իսկ արտաքին պարտքը նվազել է շուրջ 0.8%-ով:

Պարտքի աճին զուգահեռ շարունակել են աճել նաև պետական պարտատոմսերի տոկոսադրույքները: Կարճաժամկետ տոկոսադրույքները նախորդ տարվա մարտի համեմատ աճել են 3.2 տոկոսային կետով՝ հասնելով 10.1%-ի, իսկ միջնաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը՝ 2.8 տոկոսային կետով՝ կազմելով 10.5%:


Գծապատկեր 15. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ

Գծապատկեր 16. 12-ամսյա գնաճ, %




Գնաճի տեմպը կրկին սկսել է արագանալ: Գնաճի տեմպը փոքր-ինչ դանդաղել էր փետրվարին, սակայն մարտից սկսել է արագանալ՝ պայմանավորված մի կողմից՝ մարտի սկզբում ՀՀ դրամի արժեզրկմամբ, մյուս

կողմից՝ համաշխարհային շուկաներում սննդի և էներգակիրների գների աճի արագացմամբ: Չնայած մարտին ՀՀ ԿԲ-ն արդեն իսկ բարձրացրել է տոկոսադրույքը 1.25 տոկոսային կետով, այդուհանդերձ միջազգային գների աճի՝ ՀՀ տնտեսություն տարածումից խուսափել հնարավոր չի եղել: Իրավիճակի (ռուսուկրահինական պատերազմի շարունակման) պահպանման դեպքում գների աճի արագացումը կարող է շարունակվել նաև հաջորդ ամիսներին:


6.2. Ավանդներ

Գծապատկեր 17. Ավանդների 12-ամսյա աճը, %



2022թ. մարտին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճն էականորեն դանդաղել է: 2022թ. մարտի վերջի դրությամբ ավանդների ընդհանուր ծավալները նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճել են 7.6%-ով՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 3.2 տոկոսային կետով: Ավանդների աճն ապահովվել է ռեզիդենտների ավանդների շուրջ 13.0% աճով, մինչդեռ ոչ ռեզիդենտների ավանդների ծավալը նվազել է 9.1%-ով:

Գծապատկեր 18. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կես




Ավանդների աճին շուրջ 5.8 տոկոսային կեսով դրական նպաստում է ունեցել տնային տնտեսությունների ավանդների 12.6% աճը, իսկ ձեռնարկությունների ավանդների աճի տեմպը կազմել է 20.6%՝ ընդհանուր ավանդների աճին նպաստելով 3.9 տոկոսային կեսով:

6.3. Վարկեր


2022թ. մարտին՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ, վարկերի ծավալները նվազել են, սակայն անկման տեմպը դանդաղել է: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը 2022 թվականի մարտին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազել է 0.7%-ով՝ հունվարի 1.3% նվազման դիմաց:

Գծապատկեր 19. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %




Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները նվազել են առաջանցիկ տեմպով՝ շուրջ 4.8%-ով և ընդհանուր վարկերին ունեցել են 0.3 տոկոսային կետով բացասական նպաստում: Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները նվազել են 0.4%-ով և վարկերի ընդհանուր ծավալին ունեցել են նույն չափով՝ 0.4 տոկոսային կետ բացասական նպաստում:

Գծապատկեր 20. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների նվազումը հիմնականում պայմանավորված է իրավաբանական անձանց վարկերի շուրջ 6.1%-ով նվազմամբ, որի նպաստումը ռեզիդենտների ընդհանուր վարկերին կազմել է -3.5 տոկոսային կետ:

Գծապատկեր 21. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ



Վարկերի կառուցվածքն ըստ տնտեսության ճյուղերի¹¹ ուսումնասիրելու պարագայում կարող ենք նկատել, որ վարկերի աճին դրական նպաստում են ունեցել հիմնականում հիփոթեքային և շինարարության ոլորտին տրամադրվող վարկերի աճերը, որոնք ընդհանուր վարկերի աճին ունեցել են համապատասխանաբար 4.6 և 1.1 տոկոսային կետով դրական նպաստում: Գյուղատնտեսության ոլորտի վարկերի աճն արագացել է վերջին ամիսներին՝ մարտին կազմելով 14.5% և ընդհանուր վարկերի աճին նպաստելով 0.7 տոկոսային կետով:

7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Կորոնավիրուսի նոր դեպքերը կտրուկ նվազել են մարտի վերջից սկսած, իսկ մահվան դեպքերը գրեթե զրոյացել են: 2022թ. մարտին օրական միջին հաշվով գրանցվել է համավարակի 87 նոր դեպք, իսկ ապրիլի առաջին 22 օրերի ընթացքում այդ ցուցանիշն ավելի է նվազել՝ հասնելով 13-ի: Մահվան դեպքերը նույնպես էականորեն նվազել են ապրիլին:


Աշխարհի մյուս երկրների հետ համեմատության մեջ ՀՀ-ում տիրող իրավիճակը նույնպես բարելավվել է: Մեկ միլիոն բնակչության հաշվով գրանցված

¹¹ Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում: Այդ պատճառով, ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները մի դեպքում նվազում են 0.4%-ով, իսկ մյուս դեպքում՝ 1.9%-ով:

դեպքերի թվով ապրիլի 24-ի դրությամբ Հայաստանը զբաղեցնում է աշխարհում 87-րդ տեղը՝ նախորդ ամիս զբաղեցրած 85-րդ տեղի փոխարեն, իսկ մահվան դեպքերի թվով՝ 21-րդ տեղը՝ նախորդ ամսվա համեմատ մնալով նույնը:

Այս պայմաններում COVID-19 համավարակը դադարել է տնտեսական ակտիվության վրա ազդեցություն ունեցող գործոն լինելուց:

Գծապատկեր 22. Կորոնավիրուսի վարակման և մահացության միջին օրական դեպքերը Հայաստանում



* 2022թ. ապրիլի 22-ի դրությամբ

8. ԱՄՓՈՓՈՒՄ

1. Տարեսկզբին արձանագրված բարձր տնտեսական ակտիվության ցուցանիշները աստիճանաբար դանդաղում են: Տարեսկզբի բարձր ՏԱՑ-ի ցուցանիշները պայմանավորված էին բազայի էֆեկտով, ինչն աստիճանաբար չեզոքանում է՝ հանգեցնելով տնտեսական ակտիվության աճի տեմպի դանդաղմանը: Միաժամանակ, ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով ՀՀ տնտեսության համար արտաքին շուկեր հանդիսացող գործոններն ավելի են արագացնում այդ դանդաղումը: Սպասվում է, որ այդ երևույթը կշարունակվի նաև հաջորդ ամիսներին: Այդ իսկ պատճառով, ինչպես ռեյտինգային կազմակերպությունները (Moody's, Fitch, S&P), այնպես էլ միջազգային ֆինանսական կառույցները (Համաշխարհային բանկ, ԱՄՀ) արդեն իսկ նվազեցրել են 2022թ. ՀՀ տնտեսական աճի կանխատեսումը՝ մինչև 1%-ից 2% միջակայք:

2. Ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքներն արդեն իսկ դրսևորվում են ՀՀ տնտեսության վրա: Ընդ որում, առկա են և՛ դրական, և՛ բացասական ազդեցություններ: Այսպես, արտահանման լոգիստիկ խնդիրների պատճառով մարտ ամսին կտրուկ նվազել է արտահանումը, ինչի հետևանքով

արդյունաբերության ոլորտում գրանցվել է անկում՝ նախորդ տարվա մարտի համեմատ: Միաժամանակ, ՌԴ քաղաքացիների ներհոսքը դրական ազդեցություն է ունեցել ծառայությունների և առևտրի վրա: Այնուամենայնիվ, դրանց ընդհանուր ազդեցությունների արդյունքում տնտեսական ակտիվության աճի տեմպը էականորեն դանդաղել է՝ ազդանշելով հնարավոր տնտեսական ճգնաժամի հավանականության մասին:

3. ՀՀ տնտեսությունը կարող է օգտվել ստեղծված իրավիճակից իշխող ուժի կողմից ճիշտ քաղաքականություն վարելու արդյունքում: ՌԴ-ից ինչպես բնակչության, այնպես էլ կապիտալի ներհոսքը դեպի ՀՀ էական դրական ազդեցություն կունենա ՀՀ տնտեսության վրա: Սակայն դրանք ներգրավելու, ինչպես նաև ՀՀ-ում պահելու համար, կառավարության դերը բավական կարևոր է: Մասնավորապես՝ անհրաժեշտ է պարզեցնել SS ոլորտի կազմակերպությունների գրանցման և գործունեության կարգը, քանի որ հենց այդպիսի կազմակերպություններն առավելապես կարիք և հնարավորություն ունեն տեղափոխվել ՌԴ-ից: Բացի այդ, անհրաժեշտ է նաև ֆինանսական համակարգում իրականացնել համապատասխան քաղաքականություն ՌԴ-ի և արևմուտքի միջև հանգույցի դեր ստանձնելու համար: Նույնը վերաբերում է նաև տրանսպորտային ուղիներին: Սակայն, այս ամենի հետ միասին անհրաժեշտ է նաև զգալի դիվանագիտական ջանքեր, որպեսզի նման գործողությունների արդյունքում ՀՀ-ն նույնպես չհայտնվի սանկցիաների ներքո:

4. Պետական բյուջեի կապիտալ ծախսերը շարունակվում են թերակատարվել: 2022թ. հունվար-մարտ ամիսներին իրականացվել է նախատեսված կապիտալ ծախսերի ընդամենը 57.9%-ը: Ընդ որում, կառավարությունը հենց կապիտալ ծախսերի կատարումն էր համարում բարձր տնտեսական աճի ապահովման հիմնական գործիք (քանի որ որևէ այլ տնտեսական քաղաքականության էական միջոցառում նախատեսված չէ): Հետևաբար, այս պայմաններում, երբ առկա է ևս մեկ ճգնաժամի վտանգ, կապիտալ ծախսերի թերակատարումը զգալի բացթողում է: Այս իրավիճակում ավելի է կարևորվում թերակատարման պատճառների բացահայտումն ու հնարավորինս արագ շտկումը, ինչը սակայն այնքան էլ իրատեսական չէ ներկա կառավարության գործունեության պայմաններում:

5. Գների աճի արագացումը շարունակվում է, իսկ ԿԲ տոկոսադրույքի բարձրացումը հանգեցնում է պետական պարտատոմսերի տոկոսադրույքի բարձրացմանը: Գների աճի տեմպը արագացել է նաև մարտ ամսին և սպասվում է, որ կշարունակի արագանալ՝ համաշխարհային շուկաներում սննդի և էներգակիրների գների աճին զուգընթաց: Այս պայմաններում, ՀՀ ԿԲ-ն բարձրացնում է վերաֆինանսավորման տոկոսադրույքը, ինչն իր հերթին

բարձրացնում է կառավարության պարտքի սպասարկման ծախսերը: Մարտին պետական կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքներն արդեն հասել են 10.1%-ի, իսկ միջնաժամկետ պարտատոմսերինը՝ 10.5%-ի: Այս երևույթը կբարդացնի բյուջեի պակասուրդի ֆինանսավորման գործընթացը՝ հանգեցնելով բյուջեից պարտքի սպասարկման ծախսերի աճին: Հետևաբար, այս պայմաններում անհրաժեշտ է օգտագործել գնաճի դեմ պայքարի այլ գործիքակազմ, ներառյալ՝ տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի գործիքակազմը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: